



Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻԻ Թ. — ՇՐՋԱՆ Ժ.

ՏԱՐԻ Ժ. — ՍԵՊՏԵՄ. 30.

ԿՐՕՆԱԿԱՆ

ԿՂԵՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԵՆԷ ՄԻ ՆՈՐ ՀԵՏԵՒԱՆԲ.

969

Կարեկցութեան արժանի դիմակաւորաց ուխտեալ եւ յաւէտ դասալիբ խմբակի օտարուսումն գաղափարաց մէջ այս միջոցում մինոր արձագանք եւս կըըընչէ: Իբր զի մարմն-իւն եւ րաման-իւն անելը կըբարկան կըբարկան հեպտանէ է եղել, կամ թէ պարզապէս ասեմք, կղերական կրթութիւնը մատնութիւն եւ դաւաճանութիւն անել եւս կուսուցանէ եղել:

Ինչ մեծ գիւտ եւ հանճար: Հայոց մէջ՝ ոչ սակաւ ժամանակէ հետէ կղերական կրթութեան գէժ մի արձագանք կըլսուի: Բայց ոչ որ պարզ գիտէ եւ կըացատրէ կամ կարող է պարզել թէ ինչ է կղերական կրթութիւնն, ուստի՝

ուսած են զայն, Հայոց մէջ կայ, կամ թէ Հայոց մէջ կղերական կրթութիւնը ո՞ր եւ ի՞նչպէս կտեսնեն եւ կհասկանան, որ եւ ի՞նչ նշանակութիւն ունի կամ կընայ ունենալ, համեմատութիւն անել պէտք չէ՞ Հայոց մէջ երեւակայեալ եւ օտար ազգաց մէջ տեսնուած կղերական կրթութեան տարբերութեան հետը, ի՞նչ օգուտ կամ վնաս է տեսնուած Հայոց կղերական կարծուած կրթութեանն, եւ դիմակաւորաց երեւակայած կղերական կրթութիւնը եթէ Հայոց մէջ կայ եւ եթէ վերցնեմք՝ տեղը ի՞նչ տեսակ կրթութեան դնեմք, կղերական կրթութեան փոխարէնը պիտի իմանամք աշխարհակա՞ն կրթութիւն եւ ուսումնաւութիւն, կամ Ամբրիկակա՞ն, կամ Չինակա՞ն, կամ Գերմանակա՞ն, եւ կամ Գաղղիակա՞ն եւլն եւլն. Հայաստանեայց եկեղեցւոյ եւ ազգի մէջ ներքին կամ օտար խարութիւն կայ, տարբեր մարմիններ են Հայ ազգը եւ Հայոց եկեղեցին, Հայ եկեղեցականաց եւ Հայ ազգի

մէջ խտրութիւնն կայ, կամ ո՞վ է այն վատ մարդը՝ որ կրտքնի Հայ եկեղեցականաց եւ ազգի մէջ խտրութիւնն որովհետեւ:

Մենք ձանձրացանք կրկնելէ՝ որ Հայոց մէջ կղերական կրթութիւնն երեւակայելի իսպառ ի զուր եւ աւելորդ է, իսկ գիմնականորք կերպոնքն եւ կպնդոնքն՝ բայց չեն բացատրեր: միայն իւրեանց մշտական սովորութեանց՝ միանգամայն (նոցա հասկացած բառով խօսելով) իւրեանց կրտսերական՝ այլ ոչ գիտակցութեամբ խառնաշփոթ եւ հակասական գրուածոցն համընթաց գործողութեանցն համաձայն՝ կյանքստեն խանգարեալ վարուք եւ երեւակայութեամբք նոր նոր գաղափարներ եւ զրպարտութիւնք հրահրել, եւ քաղաքական խնդրոց մէջ բարձրագոյնէ՝ բայց միշտ ի ծաղր եւ ի խայտառակութիւնն անձանց իւրեանց՝ բոլորովին յիմարաբար եւ յաւելեալ ապարդիւն յոխորտալոյն նման՝ օտարաց մէջ տեսնուած գաղափարներէն կցկտուր կերպով կապի ի նրման պատուաստուելով՝ Հայոց մէջ Հայոց պաշտօնական մարմինէն կամ եկեղեցականներէն ածանցեալ վնասակար ուղղութիւնք կերպոնք՝ կր յուզուին, եւ կտքնին անխրաւութեամբ ծանրանալ Հայ եկեղեցականաց վերայ, վասն որոյ պարզապէս Հայ եկեղեցականաց գէ՛մ բացարձակ զրպարտութեամբք եւ լեզուագարութեամբք միշտ եւ հանապազ սնոտի եւ տարապարտ պատճառներով հակակրութիւնն կտածեն եւ կյանդգնին սերմանելոյ ջանալ:

Հոգ չէ, բաւական է որ գիմնականորք երբ եւ իցէ պատուութիւնն եւ ամեն մարդ տեսնէ ձանաչէ զնոսա:

Մեզ հարկ չէ գիմնականորաց ամեն մի լեզուագարութիւնն եւ զրպարտութիւնը անշուշտ յիշել՝ մէջ բերել՝ գատել եւ յանձնել ի գիտութիւնն մերայնոց. բաւական է երբեմն երբեմն նոցա գաղափարներէն մի մի օրինակ վերցնել եւ ներկայացնել ի գիտութիւնն եւ ի բարենախանձ դատողութիւնն ողջամիտ անձանց՝ ինչպէս այս անգամ եւս կանեմք այն գաղափարի համար՝ որ իբր թէ Հայոց մէջ անշուշտ կղերական կրթութեանէ յառաջ եկած մի հետեւանք է եղել մարտնչական եւ դատաւանական անելիք:

Ինչպէս ողջամիտք գիտեն եւ յաւելեալ կարեն հետազօտել իմանալ, զի Հայոց մէջ տարօրինակ եւ օբարտագրային կամ օբարտակեղեցական կղերական մարտնչական եւ ինքնուրոյն ոչ եղած է եւ ոչ կգտնուի. իսկ եթէ կղերական կրթութիւնն կանուանեն եւ մատնանիշ կցուցանեն Հայոց եկեղեցականաց գիտաւորապէս կրթօնական եւ բարոյական կրթութիւնն աւանդելի, ո՞վ կարող է տեսնել եւ ապացուցանել՝ որ Հայոց եկեղեցականաց աւանդած կրթօնական եւ բարոյական կրթութեանց մէջ մտնորութիւնք եւ անբարոյականութիւնք կան. ո՞վ կարող է գէթ մի պակասութիւնն անգամ գտնել եւ պարզել: Հայոց եկեղեցւոյ եւ եկեղեցականաց առաջնորդն է Ս. Գիրքը եւ յատկապէս Նոր Կտակարանը՝ ինչպէս նաեւ եկեղեցւոյ սրբոց Հարց կանոնները, եւ ո՞վ կարող է

յանդգնել ասել՝ որ նոյն Ս. Գրոց եւ կանոնաց մէջէն Հայ եկեղեցականք կրօնական եւ բարոյական ծուռ՝ մտորեալ գաղափարներ կբաղեն եւ կը հաղորդեն ժողովրդեան: Որքան եւս թերուսումն կամ ազէտ եկեղեցական լինի՝ դարձեալ յաւէտ կղզուշանայ բստ ամենայնի եւ կըլանայ ողջամիտ վարդապետել եւ կըթել իւր եղբարքը եւ աղգայինքը, այնպէս որ օտարաց մէջ եւ նոյն իսկ մեզ դրացի գտնուած շրջանակներում՝ յաճախ տեսնուած կրօնական եւ բարոյական խանգարմունքներէն մի փոքր նշանը անգամ չէ կարելի տեսնել մեր մէջ:—Նկատեցէք ուղղակի մեր աղգային դպրոցաց մէջ կըթուած զարգացածները եւ բաղդատեցէք առհասարակ ի մանկութենէ օտար տեղեր գնալով եւ օտար աղգեցութեանց ներքեւ դաստիարակուածներու հետ:

Հայոց կղերականք՝ կամ որ ճիշտն է՝ Պաշտօնէութիւնն՝ ժողովրդեան՝ իւր համարիւն եւ համակրօն ազգի եւ եղբարց հետ ձեռք ձեռքի տուած՝ ցայսօր պահպանած եւ աւանդած է ոչ միայն Հայաստանեայց եկեղեցւոյ ուսումնքը՝ կրօնը եւ բարոյական վարդապետութիւնքը, այլեւ լեզուն եւ գրականութիւնը՝ որքան որ ինքն ուսած եւ գիտցած է: Հայոց եկեղեցականք՝ համարիւն ազգի եւ եղբարց հետ ի միասին՝ ցայսօր Հայաստանեայց եկեղեցին՝ Հայրապետութիւնը՝ Հայութիւնը՝ Հայոց լեզուն եւ Հայոց ամեն յատկութիւնքը՝ բազում եւ չարաչար նեղութեանց՝ հալածանաց՝ տառապանաց՝ մինչեւ անգամ մահուան անձնանուէր լինելով եւ սիրով համբե-

րելով ամեն թշուառութեանց եւ խոշտանգանաց մէջ՝ այսօր կանգուն՝ կենդանի եւ յարատեւ պահած են, միանգամայն պահել ուսուցած: Հայ եկեղեցականք եւ նոցա աշակերտք ցայսօր կըթան իւրեանց համարիւն եւ համազգի եղբարքը՝ Քրիստոսի եւ եկեղեցւոյ աւանդած եւ պատուիրած առաքինութեանց մէջ, եւ ժողովրդեան մէջ տեսնուած բարոյական գեղեցիկ յատկութիւնքը եւ առաքինութիւնքը*) չէ՞ որ Հայ եկեղե-

(*) Նորահաս եւ օտարուսումն սերնդոց մէջէն՝ ըստ ստացած երիտասարդաց մէջ եւս գուցէ բարի յատկութիւն ունեցող առաքինասէրներ յարուսէ՞ն երևին. սակայն զիմակաւորք ինչ փաստ կարող են ցուցանել եւ ապացուցանել՝ զի մեր Ազգի մէջ ընդհանրացած բարեպաշտութիւնը եւ առաքինասէր նախանձախնդրութիւնքը օտարներ ուսուցած լինին. իսկ եթէ չեն կարող, ինչո՞ւ համար կըխորանան Ազգիս մէջ տիրած եւ Պաշտօնէութեանէն կամ եկեղեցականներէն ողջամտութեամբ քարոզուած եւ թելադրուած բարեպաշտութիւնքը եւ առաքինասիրութիւնքը հանդերձ արգասեօքն տեսնել. —Ստու ամենայնիւ ի տեղիս տեղիս՝ մասնաւոր զեղծումներ՝ թերութիւններ եւ մոլութիւններ կան ժողովրդեան եւ նոյն իսկ եկեղեցականաց ոմանց մէջ, մի՞թէ եկեղեցականք պատճառ տուած կամ ուսուցած պիտի համարուին:

Ահաւասիկ նոյն իսկ ի ներկայումս ինքզինքնին լուսամիտ՝ բանագէտ՝ լեզուագէտ՝ ուսումնապետ՝ եւ ամենագէտ կարծող եւ պիտականուն տիազումներով պարծենցող զիմակաւորաց մէջ զանազան մոլի անձինք կան եւ ի տեղիս տեղիս ժողովուրդը կհրապուրեն իւրեանց մոլութեանց հետ պատուաստուելոյ, եւ այս զիմակաւորք են որ սաստիկ ատելութեան կըլիք զինուած են Հայ եկեղեցականաց դէմ, արդ մի՞թէ պիտի ներեմք ասել՝ որ սոքա Հայ եկեղեցականներէն ուսած են այն ամենը.

ցականներէն ցայսօր աւանդուած՝ քարոզուած եւ խրատուուածն են. այսքան հազարաւոր եկեղեցիներ, վանքեր, դպրոցներ, հիւանդանոցներ եւ այլ բարեգործական շատ հաստատութիւնք առհասարակ Հայ եկեղեցականաց ջանիք՝ աշխատութեամբք եւ աջակցութեամբք հիմնուած եւ պայծառացած չե՞ն։ Մեր Հայրապետական, եկեղեցական եւ ազգային իրաւունքները անձնագոհութեամբ պաշտպանողները Հայ եկեղեցականք չե՞ն։ Նոսի զիմակաւոր պարոնները կարո՞ղ են գէթ ազգօգուտ մի մեծ գործ ապացուցանել՝ որ ինքեանք աշխատած եւ արգիւնաւորած լինին, որպէս զի Հայոց եկեղեցականաց գէ՛մ զինուելոյ առիթը եւս իրաւացի լինի եւ կարողանան արդարացնել, մինչդեռ շարունակ գայթակղութեանց եւ մոլութեանց առիթ կդառնան, բարոյական մի բարի օրինակ անգամ չեն կարող ցուցանել, համեստութեան հակառակ եւ անպայել կենցաղավարութեամբ՝ սանձարձակ եւ անզուսպ կրիւք ամեն ողջամտաց առեկի եւ զղուելի եղած են, ճնուղական

Հայ եկեղեցականք ուսուցած են կամ կուսուցանեն կրօնը ստել, եկեղեցում՝ ազօթելոյ շերթալ մոլութեանց վայրեր յաճախել, փոխանակ բարեպաշտական հաստատութեանց եւ առարկայից առատաձեռն նպաստներ տալոյ՝ պճնասիրութեանց՝ թղթախաղից՝ որովայնամոլութեանց եւն շոտիլ, որ մէկն առեկի։

Չարմա՞նք՝ երբ յիշեալ զիմակաւորք գէթ մի մեծ բարի արդիւնք իրադործած չեն եւ ոչ կարող են, մեծարանութեամբք եւ զրպարտութեամբք այլոց վերայ յարձակիլք մեծ քաջութիւն կկարծեն եւ կշարունակեն, եւ այսպիսիք են նոցա արդիւնք։

Նուիրական իրաւունքները անգամ արհամարհելով եւ առ ոտն կսխեյով՝ ծաղրեւծանակի առարկայ են դարձած, եւ տակաւին կհամարձակի՞ն այլոց վարուց ու բարուց մէջ բիծ որսնել, եկեղեցականաց մէջ տարօրինակ կզերական կրթութիւն երեւակայել, եւ կզերական կրթութեան հետեւանք երազել մի քանի անձանց մէջ տեսնուած մասնութեան եւ դաւածանութեան ախար, չքնայելով որ նոյն իսկ զիմակաւոր պարոններն՝—որք ըստ մեծի մասին ի մանկութենէ հետէ օտար տեղեր եւ օտար ուսումն առած եւ կրթուած են, — ճարձո՞ւնքն ու քա՞ածանսնքն ախարով աւելի վարակուած եւ օտարին դասալիք գործիք եղած են։

Բայց ինչպէ՞ս ամեն վարդապետաց փուշի չի լինիր, նոյնպէս եկեղեցականք եւ ժողովրդականք մի մի փուշեր կունենան, ոմանք այս եւ ոմանք այն թերութիւնով կամ ախարով վարակուած կլինին. թէ եկեղեցականաց եւ թէ աշխարհականաց մէջ միշտ՝ ամեն տեղ եւ ամեն ժամանակ զանազան պակասութիւնք ունեցողներ գտնուած են, ոմանք ճարձո՞ւնքն եւ քա՞ածանսնքն եւս գիտեն եւ արած են՝ կամ թէ գուցէ շարունակ անելոյ պաշտօն ունին, սակայն ընդհանրապէս մի քանի մասնաւոր անձանց ի կրից եւ ի շահամոլութենէ ճնուող առած այսպիսի ախար իրաւացի՞ եւ ներելի՞ է կզերական եւ այն երեւակայեալ մի կրթութեան վերագրել եւ ցնդարանել, յի՞թէ մարդկան մէջ ճարտարականք գտնուելով կամ պատահելով — որոց մէջ նշանաւոր եւ նո՞ւն

ըսկան երեւցած անձինք անգամ գրտնուած են եւ կան, — եթէ կասեմք մարդկան մէջ երբեմն երբեմն տեսնուած հրէշներ՝ ինչ աստիճանէ եւ կարգէ եւս լինին՝ կան եւ հազարաւոր անմեղ արիւններ տարապարտուց կրթագին, — տրամաբանութիւնն եւ արդարութիւնըն երբէք չեն ներեր եզրակացնել՝ որ ամեն մարդ անխախտ մարդաստան՝ հըրէշ եւ արիւնարբու է : թէ եւ կարելի է անգամ ասել՝ զի « միտք մարդկան ի խնամն չարին է » : ապա ուրեմն տրամաբանութեամբ եւ արդարութեամբ է ոմանց մէջ տեսնուած մտանութեան եւ դաւաճանութեան ախտէն եւս հետեւցնելը : որ կղերական կրթութիւնն զայն կաւանդէ եւ կուսուցանէ՝ ինչպէս որ դիմակաւորը կըրցնդարանեն՝ պարզամիտները խարերոյ եւ որսալոյ համար :

Թէպէտ քաջ գիտեմք դիմակաւորաց գատայլք պաշտօնը եւ յամուսութիւնը : սակայն պարզամտաց արթնութեան եւ զգուշութեան համար այսքանը եւս բաւական թող լինի :

Վ. Ե. Մ.

ՅԵՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՅԼԻՆՍԵՆ ՊԵՏԵՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(ՈՐՔ ԻՆՉՊԵՍ ԿԱՐՔՈՒՄ ԵՆ՝ ՆԿԱՐՈՒԱԾ ԵՆ ԻՐ ԿԵՆԳԱՆՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԵՒ ԻՐ ԻՍԿ ԳԷՄՔԻՆ) :

ՊԱՏԿԵՐ ՅԵՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ :
ՋՈՐ ՆԿԱՐԵՑ ԻՆՔՆ :

(ՇՐՈՒՆԻՆԻՆԻՆԻ Ե ԺՐԸ) :

Նիկեփորոսը պատմումէ, զիրք Բ. 41. 7. թէ՛ Արքարը ստանալով Փրկչի նամակը, շատ վշտացաւ չտեսնելով նորան Եղեսիա գնացած, որպէս ինքն յոյս ունէր. բայց իւրեան մխիթարելու համար՝ այնքան՝ որքան այդ կարելի էր սոյն վշտալի գէպրից յետոյ, նա որոշեց ձեռք բերել նորա պատկերը : Աստի նա ուղարկեց նորա մօտ մի խիտ հմուտ նկարիչ՝ պատուիրելով նորան գործ գնել իւր բոլոր արուեստը Յիսուսի Քրիստոսի նմանութիւնը որքան կարելի է կատարելապէս ըմբռնելու : համար, եւ իսկոյն ներկայացնել ինքեան այդ գործը (պատկերը) : Նկարիչը գնաց Երուսաղէմ՝ գրտաւ Փրկչը եւ սկսեց իւր գործը՝ նրատելով ամենայարմարաւոր տեղում, որպէս զի ամենալաւ կերպով ստանայ նրամանութիւնը : Բայց որչափ նա աւելի շատ աշխատումէր, այնչափ աւելի սակաւ յաջողումէր. « վասն զի Աստուածային փայլումն եւ հրաշագեղութիւնը ցօլումէին նորա երեսի վերայ եւ արգելումէին գործը » : ասումէ Նիկեփորոսը : Այն ժամանակ Յիսուսը նորան գժուարութիւնից հանելու համար վերցրեց մի